**«ԳԱԿ- ՇՀԾՁԲ-11/14» ծածկագրով ընթացակարգի**
**շրջանակներում գրանցված մասնակիցներին**

# Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/14» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ՀՀ կառավարության աշխատակազմի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու թարգմանության ծառայություններ՝ ըստ կից ներկայացված գնման առարկայի բնութագրի (հավելված 1):

Սույն հրավերի ծածկագիրն է «ՀՀԿԱ-ՇՀԾՁԲ-11/14-15/12»
Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային ձևով՝ www.armeps.am էլեկտրոնային կայքի (այսուհետև՝ Կայք) միջոցով ոչ ուշ, քան 10.03.2015թ. ժամը 09:30-ը:
Հայտերը կբացվեն Կայքի միջոցով՝ 10.03.2015թ. ժամը 09:30-ին:

Ընթացակարգի հանձնանժողովի քարտուղարն է ՀՀ կառավարության աշխատակազմի գործերի կառավարչության առաջատար մասնագետ Հայկ Խաչատրյանը:

Սույն ընթացակարգի վերաբերյալ բողոքները պետք է ներկայացնել Գնումների աջակցման կենտրոն՝ ք. Երևան, Կոմիտասի 54/բ հասցեով:

Հայտը ներառում է.
1. Մասնակցի գնման ընթացակարգին մասնակցելու մասին դիմումը (հավելված 2),
2. Մասնակցի գնային առաջարկը (հավելված 3):

*Գնային առաջարկը յուրաքանչյուր չափաբաժնի համար ներկայացվում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող մեկ միավորի գնով և կայքում պարտադիր լրացվում է առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման:*
*Գնային առաջարկին կցվում է (Կայք է ներբեռնվում) մասնակցի կողմից հաստատված բնօրինակ փաստաթղթի արտատպված (սկանավորված) տարբերակը (ֆայլը), որում ներկայացվում է գնի առաջարկի հաշվարկ՝ բաղկացած ինքնարժեք և ավելացված արժեք ընդհանրական բաղադրիչներից (հավելված 3):*

Գնային առաջարկների համեմատումն իրականացվում է առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման:

Հայտերը պետք է պատրաստել «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/14» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Կից՝ գնման առարկայի բնութագիրը (հավելված 1), կնքվելիք պայմանագրի նախագիծը (հավելված 4), մասնակցի դիմումի և գնի առաջարկի օրինակելի ձևերը (հավելվածներ 2 և 3):

**ՀՀ կառավարության աշխատակազմ**

___________
հեռ. 51-59-89
էլ. հասցեն՝ gnumner@gov.am